ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հունիսի 12 -ին, N 127 - Կ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՓԱՐՊԻԻ Ղ.ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վ. Պետրոսյանի 2025 թվականի հունիսի 6-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վարդան Պետրոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հունիսի 12-ից հուլիսի 16-ը ներառյալ:

2.Վարդան Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել տնօրենի պարտականությունները կատարող Լիլիթ Գյոզալյանի վրա:

3.Վարդան Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի հուլիսի 17-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 6/17/2025 10:41:43 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ